



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր Արծրունի, պատմագետ, թատրոնապետ, ինդուկտի խմբագիր
դեդուկտի Մշակի, ծնած է Մոսկուա, 1845 թուականին:

Հայրն, աղայ Երեմիա Արծրունի, իմանալուն պէս, որ գաւակ մ'ունեցած է,
անմիջապէս տուն վազեց եւ, Գրիգորին դէմքը դիտելէն ետքը, դուրս ելաւ իւր
ծանօթներուն ըսելու.

«Եթէ տղաս տեսնէք՝ ինձի ողորմիս պիտի հանէք»:

Մանկական հասակէն փորձով ցոյց տուաւ Արծրունին, որ խմբագրական
ասպարէզին մէջ մեծ անուն պիտի հանէր օր մը, վասն զի նոյն հասակին մէջ իսկ
մեծ կոչում ունէր... չհամոզուելու: Օրօրոցին մէջ ժողովրդականութիւն կը
քարոզէր. ամէն անգամ, որ ազնուապետական դասէն հիւր մը կը գտնուէր
սենեակին մէջ, շորերը փոխելու կը ստիպէր մայրն այն նշաններով՝ գորս
երախսաներ կու տան նոյնիսկ բարձրապատիւ անձերուն առջեւ:

Պատանեկութեան օրերը Մոսկուա անցունելէն ետքը՝ Գերմանիա գնաց, ուր
քանի մը տարիներ աշխատելով հսկայաքայլ յառաջադիմութիւններ ըրաւ իւր
դասերուն մէջ. ծայրագունութեան աստիճան առաւ պատմութեան մէջ եւ
եպիսկոպոսութեան աստիճանին բարձրացաւ յամառութեան մէջ:

1868-ին Վենետիկ գնաց, ուր մեկ ամսու մէջ հայերէն սորվելով Հայր Ղեւոնդէն՝ հայկաբանութեան դաս տալ ուզեց հայր Արսէն Բագրատունոյ:

Գրական ասպարէզը մտնելու համար գլխուն մէջ բառական պաշար ամբարեւելն ետքը՝ Տփղիս դարձաւ: Երբ տեսաւ հոն, որ հայերու մէջ մեռած էր ամէն կեանք եւ ոգի, սաստիկ բարկացաւ, եւ եթէ զինուորական եղած ըլլար՝ տարակոյս չկայ, որ ռմբակոծել կու տար այդ քաղաքը: Քանի մը ամիսներ խորհելէն վերջը, թէ ի՛նչ եղանակաւ կրնայ կենդանութիւն տալ ազգայիններուն՝ որոշեց լրագիր մը հրատարակել այն լեզուով, զոր չէր գիտեր:

Երբ գրաքննիչին ներկայացաւ լրագրի մը արտօնութիւն խնդրելու համար՝ գրաքննիչն հարցուց իրեն.

Լրագիր հրատարակելու չափ գիտե՞ք հայերէն լեզուն:

Ես չեմ գիտեր, պատասխանեց Մշակին տէրը, բայց ընթերցողներս շատ աղէկ գիտեն... բարեկամներս ալ գիտեն:

Արտօնութիւն առնելուն պէս տուն վազեց Արծրունին եւ հարիւր քառասուն նամակ գրեց հրաւիրելով իւր ծանօթներն, որ հաճին Մշակի խմբագրութեանը մասին նպաստել իրեն: Բարեկամներն ընդունեցին այս հրաւերն եւ 1872-ին ի լոյս եկաւ Մշակն, որ բաժանորդէն աւելի խմբագիր ունէր: Խմբագրութեան կանոնադրութիւնը կը պահանջէր, որ ամէն յօդուած ամբողջ խմբագրութեան համաձայնութեամբը հրատարակուէր: Այս կանոնադրութիւնը շատ նպաստաւոր չէր Գրիգորին, որուն ամէն յօդուածները մեկի դէմ հարիւր երեսուն եւ ինը քուէով կը մերժուէին, եւ եթէ երբեք լոյս տեսնէին՝ մեծ փոփոխութիւն կը կրէին: Այսպէս, Մշակը, որուն ամսականն ինքը կը վճարէր, փոխանակ իրեն ծառայելու՝ ուրիշներու կը հնազանդէր: Այս կէտն իրեն ծանր եկաւ եւ օր մը ինքնիրեն ըսաւ.

«Պէտք է որ իմ Մշակս միայն ինձի ծառայէ եւ ոչ ուրիշներու»:

Այս վճռոյն վրայ բարեկամները կամաց կամաց քաշուեցան խմբագրութիւնէ եւ Մշակն ալ սկսաւ իւր տիրոջը միայն ծառայել: Մշակն այս պարագային մէջ իւր պարտքը կը կատարէր, որովհետեւ Պ. Ամբակումին մշակն ալ չերթար Պ.

Կիրակոսին սեղանը դնելու կամ կերակուրն եփելու:

Արծրունին իր բարեկամներէն ազատուելուն պէս՝ յարձակողական դիրք մը առաւ: Սկսաւ հարուածել բոլոր այն անձերն, որոնք պատիւ չունէին Մշակի բաժանորդ ըլլալու. ձաղկել երիտասարդութեան անտարբերութիւնը, ազգային խեղճ մամուլն, որ աւելի խեղճ կացութեան մէջ ինկած էր Մշակին երեւմամբը, կղերն, որ միայն որովայնին կը ծառայէ եւ ազգասիրութիւնը միշտ իր կոկորդին մէջ կը փնտռէ, կղերն, որ շատ հեռաւոր դարերէ ի վեր սկսած է արգելք դնել ամէն յառաջադիմութեան, հալածելով իմաստասէր մը, որ յանդգնած էր ըսելու թէ արեգակը Պեղոպոնեսէն մեծ է: Արծրունոյ այս յարձակումները բոլորովին ապարդիւն չմնացին, ծնունդ տուին երիտասարդական կուսակցութեան մը, որ մեղուական խումբ անուանուեցաւ: Վիճաբանութիւնն սկսաւ Մշակի եւ Մեղուի մէջ:

Յայտնի է, որ մեր մէջ ոեւէ խնդիր մը լուսաբանելու համար երբ վիճաբանութիւն մը բացուի՝ բանակոտոյ մէջ իբրեւ փաստ մեծ տեղ կը բռնեն վիճաբանողներու մօրուքը, հասակը, հագուստը, ծնած քաղաքն եւ մինչեւ անգամ այդ քաղաքին բերքը: Եթէ կեսարացիի մը հետ վիճաբանութեան բռնուիս՝ ի՞նչ հարկ երկար բարակ տրամաբանել, պարզապէս գրուցէ իրեն. «Բարեկամ, որովհետեւ Կեսարիայէն պատուական ապուխտ կ'ելնէ եւ որովհետեւ ժամանակաւ կեսարացի մը էջ մը ներկած է՝ ըսել է թէ իրաւունքը իմ քովս է»:

Ադրիանուպոլսեցիի մը հե՞տ է վեճդ, ասկէ աւելի ի՞նչ դիւրին բան կայ. յաղթանակը միշտ քուկդ է: Ինչո՞ւ: Հարցունելոյ աւելորդ է, վասն զի Ադրիանուպոլսէն քաշեր (պանիր) կ'ելնէ, եւ քաշերէն աւելի ի՞նչ զօրաւոր փաստ կարող ես մէջ բերել զինքը համոզելու համար: Վառնացի՞ է ընդդիմաբանդ, հաւկիթի մէջ գնա փնտռել փաստերդ, անմիտ: Իգմիրցի՞ է, չամիչով եւ թուզով կրնաս բերանը գոցել: Եթէ ասոնք բաւական չեն, ազատ ես քթէն կտոր մը փաստ փրցունել. քիթը պզտի՞կ է. հասակին վրայ ցատկէ. եթէ հասակը բարձր է՝ հագուստէն բռնէ. եթէ հագուստ չունի՝ մերկութիւնը ծաղրէ եւ վստահ եղիր, որ պիտի փառաւորուիս անմիտներու առջեւ: Քանի որ այս է մեր ազգային տրամաբանութիւնը՝ բնական է, որ Մեղու եւ Մշակ լրագիրներն ալ գոնէ ազգասիրութեան համար ընդունին զայն, ինչպէս որ ընդունեցին: Ասոնց մէջ այնչափ տաքցաւ վիճաբանութիւնն, որ եկաւ անձնականութեան յանգեցաւ:

Արժրունոյ կազմը Տեքարթի մեթոտէն աւելի զօրաւոր փաստ մ'էր Մեղոի խմբագրին գրչին ծայրը. Միմէննեանի անուրիութիւնը աւելի արժէք ունէր քան Քանթի մէկ վկայութիւնը: Անհրաժեշտ հարկ էր, որ այս երկու պարոնները կամ իրենց լեզուն փոխէին եւ կամ իրենց կազմը, որպէսզի վիճաբանութիւնն օրինաւոր ըլլար եւ չարժանանային ռուս լրագրի մը յանդիմանութիւններուն: Արժրունին երեք չորս տարի շարունակ Մեղոի հետ հոգեւորական վիճաբանութիւն ընելէն ետքը, ուխտ ըրաւ, որ Մեղոի անունը բերանը չառնէ եւ սկսաւ հրատարակել այնպիսի յօդուածներ, որոնք բոլորովին հակառակ էին առաջին գրուածներուն: Եթէ երբեմն յօդուած պակսէր, Մշակը լեցնելու համար՝ իր բաժանորդներուն թիւը կը ծանուցանէր եւ պակասը կը լեցնէր: 1877-ին Մշակ սկսաւ շաբաթը երկու անգամ հրատարակուիլ եւ Արժրունի ամէն օր գովել գերմանական ուսումը եւ դրօշակը:

1878-ին Արժրունոյ թերթն ամէն օր կը հրատարակուէր այլանդակ գաղափարներով: Կը յանդիմանէր ս. պատրիարքն, թէ ինչո՞ւ պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Կարին չփոխադրեր, որպէսզի ուժը հոն միանայ: Կը կարծէր, անշուշտ, թէ Կարին նամակ որկելու չափ դիւրին բան է պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Հայաստան որկելն եւ թէ՛ պատրիարքն այս մասին անտարբեր է: Կ. Պոլսոյ ազգայիններն, որ Մշակի այս տեսակ կարծիքները կը կարդային, իրարու ականջն ի վար կը փափսային.

Մշակ վաղը պիտի առաջարկէ, որ կամ Պոլիս Կարին փոխադրենք կամ Կարին Պոլիս:

Եւ Արժրունին պոլսեցիներուն այս անտարբերութեանը վրայ սրդողելով կը մկրտէր զանոնք թեթեւ, կեղծ ազգասէր, շուներու եւ գողերու խառնուրդ եւ ուրիշ այնպիսի ածականներով, զորս լրագրի մը մէջ հրատարակելու համար մարդս անպատճառ գերմանական դրօշակ ունենալու է:

Վերջերս երբ ս. պատրիարքն հայերու Հայաստանի մէջ ունեցած մեծամասնութիւնը կը հաստատէր՝ Մշակ իր սովորական լեզուովը կը խրատէր պատրիարքն, որ էշերու եւ կովերու վիճակագրութիւնն ալ ընէ, եթէ մեծամասնութեան վրայ էր խնդիրը: Մարդերու, կ'ըսէր, մտաւորական եւ բարոյական հանգամանքը նկատողութեան կ'առնուի եւ ոչ թէ անոնց թիւը: Բայց

երբ Եւրոպան մեզմէ թուաբանութիւն կը պահանջէ, մենք չենք կարող իրեն փիլիսոփայութիւն ներկայացնել: Ամէն մարդ կը փափաքի, որ Մշակի կարծիքն յաղթանակէ, բայց ի՞նչ օգուտ, քաղաքագիտութիւնը դեռ տգէտ ըլլալով՝ չէ կարող ըմբռնել պ. Արծրունոյ բարձր գաղափարները:

Երբեմն այլանդակ կարծիքներ կը յայտնէ այնպիսի այլանդակ լեզուով, որ ընթերցողն կը շուարի, կը մնայ, թէ երկու այլանդակութիւններուն որո՞ւն վրայ խնդայ եւ որո՞ւն վրայ լայ: Ուր թաքիններէ յետէ կ'ուղղէ իր աշխարհաբարը, գոր ֆրանսացի մը աւելի շուտ կը հասկնայ այսօր քան հայ մը: Եւ որպէսզի գրպարտութիւն չհամարուի մեր ըսածը՝ հոս հեռագիր մը կը թարգմանենք իր լեզուով:

«Բեյնալ պատերազմական մինիստրին պախարակեց, որ խիստ մեծուրաներ չգործադրեց սենատորի մը դէմ, որ լեքիդիմական ցուցմունքներ առաւ: Կապիները կամենում է դեմիծիռնէ տալ: Բիւրժէի սոմաները ընդունուած են սենատից. եպիսկոպոսների կրեդիտը մերժեց եւ ժողովի սեսիան փակուած է յայտնում: Բիւլլըդենը կը ծանուցանէ, թէ կայսրուհին պլերիտ ունի»:

Եւ երբ եւրոպական լեզուի մը ծանօթ չեղող մէկը կարդայ այս տողերը ու բան մը չհասկնայ՝ պ. Արծրունին կը սրտմտի եւ հետեւեալ օրը Մշակին մէջ շանթ եւ հուր կը թափէ այն ամէն ընթերցողներուն գլխուն, որոնք իր լեզուն չեն հասկնար: Խնդիր մը իմաստասիրելու ատեն որոշ ուղղութիւն մը չունի. ամառը պատճառէն արդիւնք կ'երթայ, իսկ ձմեռը արդիւնքէն պատճառ. ինչպէս որ կաթողիկոսն ալ ամառը Էջմիածնէն Բիւրական կ'երթայ եւ ձմեռը ետ կը դառնայ:

Այս ընթացքով յաջողած է վերջապէս իրականացնել իր փափաքն, որ էր Մշակը կարենոր թերթ մը ընել եւ զինքն ալ կարենորութիւն ունեցող խմբագիր մը: Տփղիսու մէջ կառավարութիւնը հայ լրագրապետներու խորհուրդ չէր հարցուներ, իսկ հիմա պ. Արծրունին կը հրաւիրուի այն ժողովներուն, ուր քաղաքի մասին կարենոր որոշում մը պիտի տրուի: Ռուս թերթերն երբեմն հատուածներ կը թարգմանեն Մշակէն: Եւրոպայի թղթակիցներն «Հայաստանեայց եկեղեցոյ հայ Յակիմթոս» կամ «հայ մամուլի Էմիլ տը Ժիրարտէն» կը կոչեն զինքն եւ ինքն բնաւ բողոք չբառնար այս գրպարտութիւններուն դէմ:

Տփղիսու մէջ առաջին անգամ ինքը հաստատեց լսարանն, որու մէջ ինք ըրաւ առաջին ատենախօսութիւնը: Թւայլտեւ ատենախօսութեան նիւթն «Հայաստանի տնտեսական դրութիւնն» էր՝ բայց ատենախօսին ձեւերէն եւ շարժումներէն սա կը հասկցուէր, թէ մարդս ատենաբանելու ժամուն լայն թեւնոցներ դնելու չէ, որպէսզի ատենախօսն ժամանակ ունենայ իր նիւթովն զբաղելու եւ ոչ թէ թեւնոցներովը:

Ունկնդիրները կը սորվէին նաեւ, թէ հազը ատենաբանութեան մէջ ստորակէտի տեղ կը ծառայէ եւ թէ ներելի է այնչափ հազալ, որչափ որ կը ներէ ունկնդիրներուն երկայնամտութիւնը կամ ատենաբանին անգթութիւնը: Իսկ երբ երկրորդ անգամ ժողովրդեան առջեւ ելնելու պատիւ ունեցաւ, իր յուզումները զսպեց եւ ճարտասանի մը պէս ատենախօսեց:

Ժողովուրդը կրթելու համար խմբագրութեամբ եւ ատենախօսութեամբ չշատացաւ. իր ծախքովը թատրոն մ'ալ հիմնեց, որպէսզի հոն ալ քիչ մը ծառայէ ազգին: Սակայն չյաջողեցաւ այս ասպարէզին մէջ. վասն զի գնոյ մասին չկրնալով համաձայնիլ դերասաններուն հետ՝ հարկադրեց զանոնք, որ ուրիշ տեսարանի մը վրայ ներկայացնեն իրենց խաղերը, մուկերու թողլով խաղալ իրենց դերն պ. Արծրունոյ թատրոնին մէջ: Մշակի խմբագիրն այս անյաջողութեան վրայ սկսաւ ձաղկել այս դերասաններն եւ ատոնց ներկայացումներն:

Քրիստոնեաներու անկախութեանը համար օգնելն իրեն նուիրական պարտք մը համարելով՝ վիրատրեալները քաջալերելու համար բացաւ անոնց իր հիւրանոցները, որպէսզի աներկիւղ վիրատրոսին եւ երթան հիւրանոցներու մէջ դարմանուին: Այս ծառայութեանը փոխարէն կայսրուհիէն շնորհակալութեան գիր ստացաւ:

Պ. Արծրունին, ինչպէս ըսինք, ժողովրդական մարդ է եւ այնչափ ատեն կը սիրէ իր ծանօթներն, որչափ ատեն, որ ասոնք միջակ աստիճանի մէջ ըլլան. իսկ բարեւ տալը դադրեցուցած է այն անձերուն՝ որոնք ստորագրութիւն չեն տուած իրեն, թէ իրմէ աւելի հարուստ չպիտի ըլլան: Իւր ծանօթներուն հետ ծանօթ կ'ըսենք, վասն զի մեզ տրուած տեղեկութիւններուն նայելով՝ բարեկամ չունի հեզ եւ բարեբարոյ է. զանոնք շողոքորթելու կը զիջանի երբեմն, բայց ազնուապետականներն եւ

հարուստները միշտ կ'արհամարհե եւ այս է պատճառն, որ Տփղիսու ազնուապետականներու հետ չէ կրցած երկար յարաբերութիւն ունենալ:

Առատաձեռն է՝ երբ մէկը շողոքորթէ գինքը. վարպետորդի մը երկու շլացուցիչ ածականներով կարող է անոր քսակն գրպանէն առնել:

Իբրեւ հայ՝ ազգասէր է, եւ իբրեւ խմբագիր՝ անխոնջ գրող եւ կռուող: Արարատեան ընկերութեան մատուցած ծառայութիւններն գինքը շատ սիրելի ըրած են ազգայիններուն, որոնք միշտ կ'ըսեն, թէ «Եթէ Տփղիսու մէջ Արծրունայ պէս ուրիշ աշխատողներ ալ գտնուէին, Արարատեան ընկերութիւնն այսօր աւելի մեծ դրամագլուխի տէր կ'ըլլար»:

Կրօնականներուն այն աստիճան հակառակ է, որ երբ փողոցի մը մէջ ասոնցմէ մին տեսնէ՝ ետ կը դառնայ եւ ուրիշ փողոցէ մը ճամբան կը շարունակէ: Իւր հօրը թաղման ժամանակ, երբ կղերական դասը կ'ուզէ, որ ըստ սովորութեան մեծ հանդիսի կատարէ յուղարկատրութիւնը՝ պ. Արծրունին կը դառնայ քահանաներուն եւ կ'ըսէ.

«Դուք գէշ մարդեր էք, ես ձեզի պէտք չունիմ»:

Վերին աստիճան ուղիղ մարդ է, եւ ժողովուրդը վստահութեամբ հազար ուրբի կը յանձնէ իրեն, որ ընկերութեան մը դրկէ: Պոլսոյ մէջ չէ տեսնուած մէկը, որ ուրբի մը վստահի Պոլսոյ բոլոր խմբագիրներուն:

Վիճաբանութեան մէջ պնդագլուխ է: Այնպէս համոզուած է, թէ այն մարդն, որ վկայական մ'ունի ծոցը՝ ազատութիւն ունի յանուն գերմանական դաստիարակութեան՝ ծիծաղաշարժ կարծիքներն յայտնել եւ ստիպել ուրիշներն ընդունիլ իւր խօսքերը. իսկ երբ առանձին կը մնայ՝ խելքի ու բանականութեան կը վերադառնայ եւ կը համոզուի, թէ այսօր մարդս աւելի իւր գործերէն կը դատուի քան թէ իւր ծոցի վկայականէն: «Աւելորդ է համարում, կ'ըսէ Հարո, խօսել արեւելեան քաղաքականութեան վերաբերեալ Մշակի սխալ ու անտակոյտ յօդուածների մասին, որոնց համար իրաւամբ յանդիմանեցին նորան տեղական լրագիրները եւ որոնցմով պ. Արծրունու օրգանը՝ չափազանց ջերմեռանդութիւն ցոյց տալով, կարծես դիտմամբ ցանկանում էր ինքնակոչ կիսապաշտօնական

լրագրի դեր խաղալ եւ նմանուել «աւելի թագաւորական քան զթագաւորն» կոչուածին:

Ապստամբութիւն քարոզելով տաճկական Հայաստանի հայերին (թեպէտ երբեմն ասում էլ էր, որ Հայաստանում հայ չկայ) բոլորովին մոռանում էր, չգիտէր, թէ հաճելի՞ կը լինի այդ բանը այն կառավարութեանը, որին ինքը իբր թէ ծառայում է, համաձայն կը լինի արդեօք այդպիսի երեւոյթը այն տէրութեան հայեացքների հետ: Թիւրքիայի հայերը արդեօ՞ք իրաւ մի տէրութիւնից միայն պիտի սպասեն իրենց փրկութիւնը, թէ այդ ցնորք է, երեւակայութիւն եւ այլն, եւ այլն այսպիսի հիանալի, հրաշալի քաղաքականութիւն»:

Ընկերութեան մը մէջ երբ պ. Արծրունին չվիճաբանիր, գուարճալի խօսքեր կ'ընէ, փոքր վէպեր կը պատմէ, եւ լսողները խնդալէն կը մարեցունէ, սակայն իրեն հետ տեսնուողը միշտ զգուշանալու է հպարտ դիրք մը բռնելէ, գուարթութիւնն իսկոյն բարկութեան կ'այլափոխուի:

Գրեթէ ամէն երեկոյ քաղաքին հրապարակին վրայ կը ճեմէ եւ օտարական մը տեսնելուն պէս հետը կը տեսակցի, քանի մը կարծիքներ կը յափշտակէ վարպետութեամբ եւ հետեւեալ օրը զանոնք ոսկեգօծելով կը հրատարակէ առաջնորդող յօդուածի մէջ:

Երբ հրապարակի վրայ ժուռ կու գայ, միշտ զբաղուած է շտկելու իւր շապիկն, փողպատն, թիկնոցն, բաճկոնն եւ գլխարկն, որ առաջնորդող յօդուածներուն գլուխը դրուած վերնագիրներէն շատ փոքր է: Եթէ շարադրութիւնը լաթերէ շինուէր՝ Մշակի լեզուն այսօր բաւական կոկիկ լեզու մը պիտի ըլլար, կորսնցնելով իրեն տգեղ եւ տճեւ կողմերը: Քիչ մը ման գալէն ետքը կը նստի զբօսարանի մը մէջ, ուր քանի մը գաւաթ միայն գարեջուր խմելով՝ հետեւեալ ատուր հրապարակելիք յօդուածներուն վրայ կը սկսի խորհիլ: Քաղաքին մէջ գրեթէ միշտ կառքով կը շրջագայի, եթէ սանդուխէն վեր կառք հանելը կարելի ըլլար՝ մինչեւ անկողինը կառքով պիտի երթար, այնքան կը սիրէ չքալելը, թեպէտեւ անկէ նուազ չսիրեր գեղեցիկն, ինչպէս նաեւ բարոյականութիւն քարոզելը:

Պ. Արծրունին, ի՛նչ որ ալ ըլլայ, իր թերութիւններովն աւելի ծառայած է ազգին քան իր հմտութիւններովն: Ժողովուրդ մը իր թմրութենէն սթափեցնելու համար կծու յանդիմանութիւններն եւ խորհրդածութիւններն ուշիմ եւ խոհեմ գրութիւններէն շատ աւելի օգուտ կ'ընեն. եւ ասոր քաջ համոզուած ըլլալուն համար է, որ խրատելու տեղ կը նախատէ եւ շոյելու տեղ կը խածնէ: Քանի որ նպատակս սուրբ է, կ'ըսէ պ. Արծրունին, միշտ իրատունք կ'ունենամ հայերուն ծոյլ, շուն, գող, անատակ, լիբբ, ասանակ եւ այլն ըսելու: Թէեւ այս լեզուն հակառակ է մամլոյ ազատութեան, բայց համաձայն ըլլալով հայրենեաց ազատութեան, կը հրաւիրենք մեր ազգայիններն չզայրանալ պ. Արծրունոյ յանդիմանութիւններուն դէմ, որքան ալ անմարսելի ըլլան անոնք, վասնզի առանց հայիոյութեան չիք փրկութիւն:

Զինքն անձամբ ճանաչելու պատիւը չունենալով՝ չենք կարող անոր կազմութեանը վրայ գաղափար մը տալ մեր ընթերցողներուն. իսկ եթէ հաւատանք մեզի տրուած ծանօթութիւններուն՝ կը պարտաւորինք ըսել, թէ պ. Արծրունոյ կազմը նոյն ուղղութիւնն ունի, ինչ ուղղութիւնն ունի Մշակը, եւ անշուշտ փառք մ'է իրեն եթէ ոչ Մշակին մէջ, գոնէ իր անձին վրայ Եզոպոսն ներկայացնելը: Դարձեալ մեր քաղած տեղեկութիւններուն յենլով՝ պ. Արծրունին պէտք է ունենայ այն դէմքը, զոր կ'ունենայ մարդ, երբ սխալմամբ գաւաթ մը կազ խմէ: